ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿՈՏԱՅՔ»
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЩЕСТВО
ВОДОПОЛЬЗОВАТЕЛЕЙ
«КОТАЙК»
REPUBLIC OF ARMENIA
«KOTAYK» WATER USERS
ASSOCIATION

ՀՀ Կոտայքի մարզ Գ.Բալահովիտ, Մ.Թումայան 14
E-mail: kotaykwua@mail.ru

РА Котайкская область с. Балаовит М.Тумасян 14
RP Kotayk region v. Balahovit M. Tumasyan14

«24» «հունիսի» 2024թ.
Ելք N ԳՀ 1-04/364

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Շահգալդյան**

Տեղեկացնում ենք, որ Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի հիմնական հատվածի ոռոգումն իրականացվում է «Ալափարսի սիֆոն» բաժանարարից: Կապված «Արգել ՀԷԿ»-ի ուղղաթեք ջրանցքի թողունակության մակարդակի տատանումներից, ոչ միշտ է հնարավոր լինում իրականացնել ջրամատակարարում: Նշված ջրանցքում հորիզոնների տատանման հետևանքով ջրամատակարարումը դադարում է, որից հետո վերականգնման համար ծախսվում է երկար ժամանակ, ինչի արդյունքում խախտվում է ոռոգման սահմանված ռեժիմներն ու գրաֆիկները: Անհրաժեշտ է, որ կատարվեն շինարարական աշխատանքներ և նշված բաժանարարը սիֆոնային միացումից փոխարինվի հատակային ուղիղ միացմամբ: Նշված աշխատանքների կատարման դեպքում ջրանցքի հորիզոնի տատանումների ժամանակ ջրանջատումներ չեն լինի և հետևաբար հնարավոր կլինի Ալափարս գյուղի հիմնական հատվածին ապահովել կանոնավոր ջրամատակարարում:

Կից ներկայացնում ենք նորոգման աշխատանքների թերությունների տեղեկագիրը: Խնդրում ենք Ձեր աջակցությունը խողովակների ձեռք բերման և հորատման աշխատանքների իրականացման հարցում, ընդ որում հողային և եռակցման աշխատանքները կիրականացվեն ընկերության միջոցներով:

Առդիր՝ 1 նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Լ. Հարությունյան
Հեռ. (+374) 98 98 98 33

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՈՒՏՔ «24» 06 2024թ.
Մուտք N 2923 Ելք N 04